ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 51/3

31-ը մարտի 2021 թվականի

ԵՊՀ ԻՄ-ում ներքին դրամաշնորհային թեմաները ֆինանսավորման երաշխավորելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 6-րդ, 12-րդ և 16-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ, 12-րդ և 16-րդ ենթակետերով, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգի /հաստատված 2020թ. դեկտեմբերի 25-ի նիստի թիվ 48/5 որոշմամբ/ 2.2, 5.15 կետերով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ֆինանսավորման ներկայացված թեմաները համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում ֆինանսավորման երաշխավորված ներքին դրամաշնորհային հետազոտական թեմաներ

1. «Նոր մշակաբույսերի ներդրման ուղղությունները Տավուշի մարզում» թեմայով հայտին տրամադրել դրամաշնորհ 400.000 դրամի չափով: (Ղեկավար՝ **Դավթյան Ս.**)
2. «Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում» թեմայով հայտին տրամադրել դրամաշնորհ 500.000 դրամի չափով: (Ղեկավար՝ **Հովհաննիսյան Գ.**)
3. «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)» թեմայով հայտին տրամադրել դրամաշնորհ 500.000 դրամի չափով: (Ղեկավար՝ **Միքայելյան Մ.**)
4. «Տավուշի մարզում պարարտանյութերի օգտագործման հիմնախնդիրները, այդ թվում քիմիական պարարտանյութերի վաճառակետերի անհամաչափ տեղաբաշխումը և դրանց կարգավորման ուղիները» թեմայով հայտին տրամադրել դրամաշնորհ 500.000 դրամի չափով: (Ղեկավար՝ **Սիմոնյան Գ.**)